ՀՏԴ 941(479.243) Պատմություն

Հրանտ Աբրահամյան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, առաջատար գիտաշխատող,
E-mail. abrani@mail.ru

1988թ. ՇՈՒՇԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Շուշին, որը գոյություն ունի վաղ միջնադարից, իր գոյության ընթացքում բազմիցս ավերվել է թուրքերի կողմից և քաղաքի հայ բնակչությունը ենթարկվել ցեղասպանության:

Վերջին անգամ Շուշիի հայությունը ողբերգություն է ապրել 1988թ. մայիս և սեպտեմբեր ամիսներին: Այս անգամ քաղաքի հայերը, ենթարկվելով դաժան ճնշման, արտաքսվել են իրենց բնօրրանից: Նրանց կրած տանջանքների և կորցրած միջոցների մասին պատմող նյութերը պահվում են Հայաստանի ազգային և Արցախի պետական արխիվներում:

Բանալի բառեր. ցեղասպանություն, շարժում, հանրահավաք, վերամիավորում, կոչեր, սրվել, լուծարում, թալանել, բռնաճնշում, սարսափ:

Грант Абрамян,
доктор исторических наук, профессор,
институт истории НАНРА, ведущий научный работник, сотрудник

ТРАГЕДИЯ ШУШИ В 1988 ГОДУ

Шуши, которая существует в раннем средневековье, во время его существования неоднократно разрушался турками, и население города было подвергнуто геноциду. В последний раз армяне Шуши пережили трагедию в мае и сентябре 1988 года. На этот раз армяне были подвергнуты сильному давлению, и были выселены с их места жительства. Материалы о страданиях и потерянных средствах хранятся в национальных и государственных архивах Армении и Арцаха.

Ключевые слова: геноцид, движение, демонстрация, воссоединение, призывы, обострение, роспуск, грабёж, репрессия, ужас.

Hrant Abrahamyan,
Doctor of Historical Sciences, professor,
Institute of History of NPO of the RA, leading scientific worker

TRAGEDY OF SHUSHI IN 1988

Shushi, which dates back to the Early Middle Ages, was repeatedly destroyed by the Turks during its existence and the Armenian population of the city suffered Genocide.

The Armenians of Shushi suffered tragedy in May and September, 1988.This time the Armenians of the city were exiled from and subjected to cruel tension. The materials telling about the tortures they suffered and the means they lost are kept in the national archive of Armenia and in the state archive of Artsakh.

Key words: genocide, movement, demonstration, reunion, appeals, escalation, dissolution, loot, repression, horror.

2017թ. մայիսի 9-ին լրանում է Շուշիի ազատագրման 25-ամյակը: Պատմական աղբյուրների վկայությամբ երբեմնի այդ սքանչելի քաղաքը՝ որպես բնակավայր, գոյություն է ունեցել վաղ միջնադարից: 18-րդ դարի երկրորդ կեսին նա երկրամասի վարչական կենտրոնն էր, իսկ 19-րդ դարում տնտեսության և մշակույթի զարգացմամբ, բնակչության քանակով՝ Թիֆլիսից և Բաքվից հետո Անդրկովկասում երրորդ քաղաքը:

1920թ. մարտի 23-ին մուսուլմանական ամանորին, ազերի թուրքերի և քրդերի կողմից քաղաքի հայերը ենթարկվել են ցեղասպանության: Քաղաքը 1916թ. ունեցել է 43864 բնակիչ,[1] որից ավելի քան 27 հազարը հայեր էին: Այդ հրաշք քաղաքը թուրքի բարբարոս գործողությունների հետևանքով վերածվեց կիսաավեր և աննշան մի բնակավայրի: Այդ սարսափելի բարդուղիմեոսյան գիշերը՝ 1920թ. մարտի 23-ին, գլխատվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխաներ: Թիֆլիսում տպագրվող «Слово» թերթը գրել է. «Քաղաքի հայկական մասում չի մնացել քարը քարի վրա: Մուսուլմանական խուժանը ներս է խուժել այդ մասը և սկսել սպանել հայ բնակիչներին: Մտնում են տները, սպանում տան տերերին, հափշտակում բոլոր արժեքավոր իրերը և ապա տունը հրկիզում: Քաղաքի հայկական մասը մարտի 23-ի երեկոյան ներկայացնում էր իրենից կրակի ծով»:[2] Ժամանակակից հայտնի վիճակագիր Բախշի Իշխանյանի հաշվումներով այդ օրերին Շուշիում զոհվել է 8988 հայ:[3] Այդ դահիճ-հանցագործները մնացին անպատիժ, և ոչ ոք պատասխանատվության չենթարկվեց:

[1] Кавказский календарь на 1917 г., ст. 190.
[2] Слово, 16 апреля, 1920.
[3] «Առաջ» (Թիֆլիս), 1 ապրիլի, 1920:

1920թ. այդ իրադարձություններից հետո քաղաքում ոչ մի հայ չմնաց: Ցեղասպանությունից փրկվածները երկար ժամանակ չկարողացան վերադառնալ հարազատ քաղաք, որովհետև Ադրբեջանի իշխանությունները բացահայտ արգելում էին:

Ժամանակակիցներից Աբրամ Կիսիբեկյանը վկայում է, որ հայկական մասում 7000 կառույցից անվնաս մնացած 750-800 երկհարկանի, եռհարկանի հոյակապ տները քանդեցին և փայտեղենը վառեցին՝ փոխանակ վերականգնելու:[1] Հետագայում վիճակը փոխվեց: Հարյուրավոր հայ ընտանիքներ վերաբնակվեցին այնտեղ: Արդեն 1988թ. նախօրյակին Շուշիում բնակվում էին հարյուրավոր ընտանիքներ:

Երբ վեր էր բարձրանում ժողովրդական շարժումը, սկզբի օրերին քաղաքը «հանգիստ» էր երևում: Սակայն սումգայիթյան ցեղասպանությունից հետո իրադարձությունները կտրուկ փոխվեցին: Քաղաքի ազերի թուրքերը սկսեցին հետապնդել հայերին, նրանց հրապարակայնորեն վիրավորել և թույլ տալ այլանդակություններ: Հետաքրքիրն այն է, որ Ադրբեջանում մի ամբողջ խումբ հեղինակներ ալիևյան կոչով հրապարակում են հարյուրավոր գրքեր և հոդվածներ, որոնցում խոսք չկա Շուշիի այդ ամոթալի իրադարձությունների մասին:

1988թ. մարտ-մայիս ամիսներին Շուշիում անընդհատ տեղի ունեցող հանրահավաքներն ուղղված էին հայերի դեմ: Այդ հավաքներում կոչեր էին հնչում հայերին վտարելու քաղաքից և խլելու նրանց ունեցվածքը: Շուշիում հայերի առաջին զոհը դարձավ Վիտալի Պետրոսյանը, որին մահվան հասցրին մայիսի 5-ին: Մայիսի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և հանրապետության մի խումբ պատգամավորներ ու իշխանավորներ կոչով, դիմելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, խնդրում են դրականորեն լուծել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը և վերջ տալ բոլոր տեսակի վայրագություններին:

1988թ. մայիսի սկզբից սկսած, ազերի թուրքերը, Բաքվի հրահանգով, հայերին հեռացնում էին աշխատանքից: Թուրք ամբոխը, զինված երկաթե ձողերով, փայտերով, քարերով, խուլիգանական արտահայտություններով վիրավորում էին հայերին և պահանջում հեռանալ <իրենց> քաղաքից: Հանրահավաքներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով հակահայկական կոչեր էին հնչեցվում՝ հայերին ոչինչ չվաճառել, երեխաներին չթողնել դպրոց գնալ, զրկել էլեկտրականությունից ու հեռախոսից, խլել նրանց ունեցվածքը:

Այսպիսով հայ-ադրբեջանական հարաբերությունները ծայրաստիճան սրվել էին: Շուշիում տեղի ունեցող հանրահավաքներին ակտիվորեն մասնակցում էին նաև հարևան մուսուլմանական գյուղերից եկած թուրքերը: Նրանք վայրենաբար էին տրամադրված հայերի նկատմամբ: Նրանք և նրանց աջակիցները հանրահավաքներում հայտարարում էին, որ եթե հայերը չհեռանան քաղաքից, ապա կարժանանան 1920թ. ճակատագրին: Քաղաքի ազերի թուրքերն այն աստիճան էին սանձարձակ դարձել, որ հանրապետության իշխանություններից պահանջում էին լուծարել ինքնավար մարզը:

1988թ. մայիսի 16-ից սկսած՝ երեք օրվա ընթացքում քաղաքի հայերի մի զգալի մասը արտաքսվում է իր բնակարաններից և կողոպտվում: Արտաքսվածների մի մասը ոտքով հասնում է Քարին տակ, Մխիթարաշեն և Շոշ գյուղերը, մի մասն էլ՝ Ստեփանակերտ: 56 ընտանիք տեղավորվում են Ստեփանակերտի հյուրանոցներում և հանրակացարաններում, տասնյակ ընտանիքներ էլ տեղավորվում են մերձակա գյուղերում: Քաղաքում մնացած ընտանիքները և իշխանությունների հորդորանքով ետ վերադարձածները հազիվ էին կարողանում դիմակայել քաղաքում ստեղծված սարսափելի պայմաններին: Նույն թվականի սեպտեմբերի 18-20-ին, թուրքերի բռնաճնշումների հետևանքով, հայ բոլոր ընտանիքները հեռանում են Ստեփանակերտ և այլ տեղեր: Ադրբեջանի լրատվամիջոցները լկտիաբար փորձում էին հանրայնությանը համոզել, թե իբրև հայերը Շուշին լքել են ինքնակամ և նրանց նկատմամբ ոչ մի բռնություն չի իրագործվել:

1988թ. մայիսի 17-19-ը և սեպտեմբերի 19-21-ը Բաքվում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքները, պաշտպանելով Շուշիի թուրքերի հակահայկական գործողությունները, կոչ են անում հանրապետության մյուս քաղաքներում ևս հետևել Շուշիի՝ իրենց հայրենակիցների օրինակին և իրենց քաղաքից արտաքսել բոլոր հայերին:

ԼՂԻՄ կուսմարզկոմի բյուրոն 1988թ. մայիսի 17-ին մ քննարկելով «Շուշի քաղաքում պրովոկացիաների մասին» հարցը, խստորեն դատապարտում է Շուշիի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ն. Հաջիևին, որը նպաստել էր քաղաքում հակահայկական գործողությունների ծավալմանը:[2]

Ահա թե իրենց կրած տանջանքների մասին ինչ են պատմում Շուշիից բռնագաղթվածները. Նարմիմանովի փողոցի թիվ 21 տան 17-րդ բնակարանում բնակվող Վլադիկ Նազարյանը նկարագրում է, թե ինչպես մայիսի 16-ին գազազած թուրք ամբոխը հարձակվելով իրենց տան վրա, քարերով ջարդում է բոլոր ապակիները և պահանջում անհապաղ հեռանալ քաղաքից: Վ. Նազարյանի ընտանիքը սարսափած հեռանում է իր բնակարանից և մի կերպ ոտքով հասնում Ստեփանակերտ:[3]

Մայիսի 1-ի անվան փողոցի թիվ 26-րդ տան 27-րդ բնակարանի բնակչուհի Ասյա Գրիգորյանը պատմում է, որ մայիսի 16-ին մի խումբ ազերի թուրքեր հայհոյելով մոտենում են իրենց տանը, քարեր նետում և պահանջում անմիջապես հեռանալ քաղաքից, թե չէ կենդանի չեն մնա: Ճնշված ու վիրավորված Գրիգորյանների ընտանիքը անչափահաս երեխաներով, ստիպված հեռանում է քաղաքից:[4]

Վազիֆի անվան փողոցի թիվ 3-րդ տան 24-րդ բնակարանի բնակչուհի Սուսաննա Հովսեփյանը ցավով է պատմում, որ 1988թ. մարտ-մայիս ամիսներին իրենց ընտանիքը ամեն օր ենթարկվել է թուրքերի բռնաճնշումներին: Նախ՝ ամուսնուն հեռացրել են աշխատանքից, հետո պահանջել ընտանիքով հեռանալ քաղաքից: Բացի այդ, ամեն օր մի քանի

[1] Աբրամ Կիսիբեկյան, Հուշեր, գիրք 2, Երևան, 2011, էջ 132.
[2] <Սովետական Հայաստան>, 13.05.1988:
[3] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.1159, ց.3, գ.49, թ. 54-55:
[4] Նույն տեղում, թ. 60:

անգամ զանգում են հեռախոսով, հայհոյել և զգուշացրել, որ կենդանի չեն մնա: Նրանց մնում էր հեռանալ սեփական բնակարանից:[1]

Առավել ցավալի է Մայիսի 1-ի անվան փողոցի թիվ 26 տան 23-րդ բնակարանի բնակչուհի Դվինա Առաքելյանի տված բացատրությունը: Ահա թե ինչ է պատմում նա. «1988թ. սեպտեմբերի 18-ին՝ երեկոյան ժամը 8-ին, մեր շենքում բարձրանում է աղմուկ, որի պատճառը այն էր, որ իբրև Ստեփանակերտի բնակիչները հարձակվել են Խոջալուի վրա, ադրբեջանցիներ սպանել ու տներ վառել: Նրանք գոռում էին, թե քանի որ հայերը չեն հեռանում քաղաքից, ապա նրանց նկատմամբ պետք է իրագործեն Սումգայիթի մեթոդները: Հետո սկսել են գոռգոռալ՝ կորչեն հայերը, մահ նրանց, կեցցե Սումգայիթի հերոսները: Որից հետո սկսել են քարերով ջարդել մեր տան ապակիները, երկաթե ձողերով և կացիններով ջարդել տան դուռը:

Իմանալով, որ մենք մեր տանը չենք, այլ գտնվում ենք հարևան ադրբեջանցու տանը, սկսում են ավելի բարձր գոռալ ու սպառնալ, թե դուրս եկեք այդտեղից, բոլորիդ կսպանենք: Ժամանակ ենք տալիս մինչև առավոտ: Գիշերվա ժամը երեքին մենք փախչում ենք հայկական թաղամաս, որտեղ ապրում էին մեր հարազատները: Սեպտեմբերի 19-ի առավոտյան գազազած ամբոխը հարձակվում է հայկական թաղամասի վրա և սկսում ջարդել տների ապակիները, դռները, քանդել տանիքները, անջատել էլեկտրականությունն ու հեռախոսները: Այդ ժամանակ, երբ Ստեփանակերտի հետ հեռախոսակապը վերականգնվում է, կատարվող վանդալիզմի մասին հաղորդում ենք այնտեղ և օգնություն խնդրում: Ուղղարկվում է երկու ավտոբուս: Տեղափոխումը տեղի է ունենում սեպտեմբերի 20-ին: Սեպտեմբերի 24-ին Շուշիի քաղխորհրդից հայտնում են, որ գնանք տան իրերը բերենք: Գնում և ինչ ենք տեսնում. տան դռան փոխարեն խփված է տախտակ: Մտնում ենք ներս և տեսնում ամեն ինչ թալանված և ջարդ ու փշուր արված»: Դվինան իր բացատրականում ներկայացնում է գողացված և ջարդված իրերի 66 անուն՝ 6707ռ. արժեքով:[2]

Սրտի կսկիծով ես ընթերցում Մաքսիմ Գորկու անվան փողոցի թիվ 1 տան 3-րդ բնակարանի բնակչուհի, հերոսուհի մայր Վարսենիկ Հակոբյանի վկայությունը: Նա պատմում է, որ փետրվարի 13-ից հետո կորցրել էին հանգիստը: Մուսավաթ թուրքերը ամեն րոպե և ամեն քայլափոխի վարկաբեկում ու հայհոյում էին իրենց, անիծում հայոց կրոնն ու սուրբ վեհափառին: Նա գրում է, թե դժվար է նկարագրել, թե ինչպիսի ապրումներ ու տանջանքներ քաշեցինք մուսուլմանական ամանորին: Թուրքերը քաղաքում լուրեր էին տարածել, թե այդ օրը պիտի հայի մսից խորոված ուտեն: 26 կոմիսարների անվան այգում կրակ էին վառել: Այնտեղ մեծ տոնախմբություն էին կազմակերպել, որին մասնակցում էին նաև ռուս զինվորները: Նվագախմբի ձայնին խառնվել էր նրանց վայրագ գոռգոռոցները և հրացանների կրակոցները:

Սարսափից չկարողացանք աչքներս փակել: Այդ վիճակը շարունակվեց մինչև մայիսի կեսերը: Մայիսի 14-ին թուրքերը միտինգ կազմակերպեցին: Բարձրախոսով հայտարարեցին, թե <<իրենց>> քաղաքից հայերը պետք է հեռանան ու քաղաքը մաքրեն: Մայիսի 15-ին ոչ մի հայի չթույլատրեցին գնալ աշխատանքի: Մեզ դիմավորեցին հայհոյանքներով, գռեհիկ խոսքերով և քարերով: Այդ օրը քաղաքի ճանապարհները փակել էին ավազակախմբերը: Ակամայից հիշեցի 1918-1920 թվականների գաղթը: Այդ ժամանակ հինգ տարեկան էի, սակայն լավ եմ հիշում, թե ինչպես երեխաները, կանայք, ծերերը ոտքով ընկել էին ճանապարհ, ձորերով ու քերծերով, ով որտեղով կարող էր, իր գլուխը փրկելու: Նույն ձևով հիմա իմ երեխաներիս ու թոռներիս հետ մի կերպ եկանք և մեր փրկությունը գտանք Ստեփանակերտում: Մենք չէինք ուզում հայոց Շուշին մնա դահիճների ձեռքին: Դրա համար էլ վերադարձանք: Ի՞նչ տեսանք. չկար մի տուն, որը վայրենաբար ջարդ ու փշուր եղած չլիներ, հայերի բոլոր կրպակները վառված էին ու թալանված: Մեպտեմբերի 18-ին վայրենացած թուրքերը գոռգոռոցներով ու այլանդակ հայհոյանքներով հարձակվեցին մեզ վրա: Ճանապարհները փակ էին, չէինք կարողանում փախչել: Օգնության հասած զինվորականների օգնությամբ, քարերի տարափի տակ մի կերպ քաղաքից հեռացանք տանկերի և զրահամեքենաների օգնությամբ:[3]

Ցավով ես ընթերցում նաև Եղիշե Բաբայանի, Զոյա Հովհաննիսյանի, Սեդա Մանասարյանի, Ռաբեկա Մարտիրոսյանի, Գյուլչորա Պողոսյանի, Գրիգորի Առստամյանի և շատ շատերի վկայությունները:

Բերված տվյալները, որոնք պահվում են Հայաստանի ազգային և Լեռնային Ղարաբաղի պետական արխիվներում, անառարկելիորեն ապացուցում են, որ Ադրբեջանի մոլագար իշխանությունների դրդմամբ Շուշիի ազերի թուրքերը քաղաքի հայերի նկատմամբ ցուցաբերել են բարբարոսություն: Նրանց բռնարարքների հետևանքով քաղաքի հայերը արտաքսվում են իրենց տուն ու տեղից, զրկվում տասնամյակների ընթացքում ստեղծած սեփականությունից ու դառնում փախստականներ: 1992թ. մայիսի 9-ին հայ ազատամարտիկների կողմից Շուշին ազատագրվելուց հետո նրա նախկին հայ բնակիչներից շատերը վերադառնում են սեփական օջախ ու սկսում նոր կյանք կառուցել՝ հավատացած լինելով, որ հայրենի Շուշին այլևս նման ողբերգություն չի տեսնի:

[1] Նույն տեղում, թ. 63:
[2] Նույն տեղում, թ. 50-51:
[3] Նույն տեղում, թ. 63-64: